ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի «8. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժնում լրացնել

1) 8.5.1.3-րդ և 8.5.2.4-րդ ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.

8.5.1	**Մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝**	
8.5.1.1.	արհեստագործական հիմնական կրթական ծրագրի իրականացման իրավունքի համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
8.5.1.2.	արհեստավորի կամ կրտսեր մասնագետի որակավորման (ուղղվածության) ծրագրի իրականացման համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
8.5.1.3	**նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի իրականացման համար (մինչ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած և աստիճանաբար ներդրվող, «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված արհեստագործական կրթական ծրագրի մակարդակում տվյալ որակավորման շրջանակային նկարագիրը հաստատելը)**	**բազային տուրքի 30-ապատիկի չափով**

8.5.2 Մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝

8.5.2.1.	միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացման իրավունքի համար	բազային տուրքի 120-ապատիկի չափով
8.5.2.2.	մասնագետի որակավորման (ուղղվածության) ծրագրի իրականացման համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
8.5.2.3	մասնագիտական ուսումնական հաստատության պետական ավարտական փաստաթղթի կրկնօրինակ տրամադրելու համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
8.5.2.4	**միջին կրթական ծրագրի իրականացման համար (մինչ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած և աստիճանաբար ներդվող, «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված միջին մասնագիտական կրթական ծրագրի մակարդակում տվյալ որակավորման շրջանակային նկարագիրը հաստատելը)»:**	**բազային տուրքի 150-ապատիկի չափով**
8.5.3	բարձրագույն կրթության առաջին մակարդակին (բակալավրին) համապատասխան կրթական ծրագրի իրականացման համար՝տարեկան	բազային տուրքի 300-ապատիկի չափով

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: